ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Առողջության ապահովագրության փաթեթի ձևավորում

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: 2023 թվականին ընդունվել է ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառված է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2026թ-ից, իսկ 2025 թվականը համարվում է ԱՀԱ ներդրման նախապատրաստման տարի, որի ընթացքում պետք է իրականացվեն հիմնական փաթեթում ներառված պրոֆիլակտիկ սքրինինգների փորձարարական ծրագրի մշակում և ներդնում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԱՀԱ փորձարկման փուլի ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, Առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է համապարփակ ապահովագրության հիմնական փաթեթի ցանկում ընդգրկված պրոֆիլակտիկ սքրինինգային հետազոտության իրականացման աշխատանքների մանրամասն պլանավորում՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ, սույն աշխատանքի նկարագրով նախատեսված գործողությունները սահմանված ժամկետներում իրականացնելու նպատակով՝ միջազգային ստանդարտներին համապատասխան:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության Համապարփակ Ապահովագրության հիմնական փաթեթի ցանկում ընդգրկված օնկոսքրինինգների իրականացման աշխատանքների պլանավորում, այդ թվում՝

1. Սքրինինգային ծրագրի շրջանակներում պրոֆիլակտիկ այցի փորձարարական մոդելի մշակում:
2. Սքրինինգային ծառայությունների իրականացման մոդելի ստեղծում՝ սքրինինգի մեթոդի և թիրախային խմբի ընտրություն, ռազմավարության մշակում,գործելակարգերի մշակում և այլ անհրաժեշտ միջոցառումներ:
3. Հնարավորությունների գնահատում և ծառայությունների սխեմատիկ նկարագրում

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետից ակնկալվում է ստանալ ամսեկան հաշվետվություններ աշխատանքի նկարագրով սահմանված գործառույթների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև հավաքագրված տեղեկատվության համադրումների, դրանց մեկնաբանությունների ամփոփ տեղեկատվության պարբերական փոխանցում Պետական առողջապահական գործակալությանը:

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետը, ըստ անհրաժեշտության, Պետական առողջապահական գործակալության կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է մասնակցի սույն աշխատանքի նկարագրով պայմանավորված պրեզենտացիա/ների կազմմանը, նկարագրելով առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սույն աշխատանքի նկարագրի շրջանակներում աշխատանքները պետք է իրականացվեն մինչև 30.06.2025 թվականը՝ երկարաձգման հնարավորությամբ:

ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- բարձրագույն բժշկական կրթություն,
- Առնվազն 5 տարվա փորձառություն հիվանդությունների կանխարգելման՝ առավելապես սիրտ–անոթային հիվանդությունների կանխարգելման, բուժման բնագավառում,
- Առնվազն 3 տարվա փորձ տվյալների մշակման, վերլուծության բնագավառում
- Նմանատիպ աշխատանքներում ներգրավվածությունը կդիտվի առավելություն
- Հայերենի, Ռուսերենի և Անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: